ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

JOURNAL OF ORIENTAL STUDIES

№ 22

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)
Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր
Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ
Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր
Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր
Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ
Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ
Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր
Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.
Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.դ.
Գրեկյան Երվանդ պ.գ.դ.
Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)
Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)
Էքմեքչյան Լեռնա PhD (ԱՄՆ)
Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա)
Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արաբագիտություն

Արաքս Փաշայան
ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՆ ԵՎ «ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՈՒՆԸ». ԵՐԿԱԿԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....7-21

Գոռ Գևորգյան
ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ. ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ (1981-2014 ԹԹ.).....22-34

Վահե Հակոբյան, Տաթևիկ Մկրտչյան, Հայկ Քոչարյան
ԹՎԻԹԵՐԻ ԱՐԱԲԱԼԵՋՈՒ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ 2020Թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՋՈՐԴԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ (2020-2021ԹԹ.).....35-49

Տաթևիկ Մկրտչյան
ԻՄԱՄ ԱԼԻԻ ՆԱՄԱԿԸ ՄԱԼԻՔ ԱԼ-ԱՇԹԱՐԻՆ՝ ՈՐՊԵՍ ԱՐԴԱՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՎԱԽՈՒԹՅԱՆ ՅՈՒՐՕՐԻՆԱԿ ՄԻ ՆՄՈՒՇ.....50-61

Անանա Անտոնյան
ՏԱԲԱԿԱԹ ԺԱՆՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ 9-ՐԴ ԴԱՐԻ ԱՐԱԲԱՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԳՐԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ.....62-75

Սպարտակ Բաղդասարյան
2005 Թ.-Ի ԻՐԱՔՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՈՒՐՋ.....76-94

Թյուրքագիտություն

Լուսինե Խաչատրյան, Անուշիկ Մարտիրոսյան, Ալեքսանդր Սաֆարյան
ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ÜZERE ԵՎ DİYE ՀԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԴՐԱՆՑ ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ.....95-109

Սամվել Ռամազյան
ՆՈՐԱՀԱՅՏ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐ «ՔՅՈՌՕՂԼԻ» ԷՊՈՍԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐՈՒՄ 110-116

Թամարա Աղամալյան
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ 1965-1969 ԹԹ. 117-131

Ալբինա Մուրադյան
ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ 132-152

Իրանագիտություն

Արփինե Առուշանյան
ՀՈԳՈՒ ՎԵՐԱՄԱՐՄՆԱՎՈՐՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ԾԱՅՐԱՀԵՂ ՇԻԱՅԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐՈՒՄ 153-167

Լիանա Պետրոսյան
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԻԻՀ-ՈՒՄ Մ. ԱՀՄԱԴԻՆԵԺԱԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (2005-2013ԹԹ.) 168-182

Ժաննա Վարդանյան *
ԻՐԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՎ ՀԵՏՈ 183-195

***

Աշխեն Հովսեփյան
ՀԱՅ-ՀՆԴԿԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 196-204

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ
Արտյոմ Տոնոյան
Հովհաննես Խորիկյան, Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումը, «Էլդորադո» հրատ., Հայաստանի Հանրապետություն, Գյումրի, 2021, 456 էջ: 205-211

CONTENT

Arabic Studies

Araks Pashayan
SAUDI ARABIA AND THE «ARAB SPRING». THE POLICY OF DOUBLE STANDARDS 7-21

Gor Gevorgyan
TRANSFORMATION OF EGYPT`S ARAB POLICY: OPPORTUNITIES AND CHALLENGES (1981-2014) 22-34

Vahe Hakobyan, Tatevik Mkrtchyan, Hayk Kocharyan
DISCUSSION OF THE MAIN DISCOURSES OF THE 2020 44-DAY ARTSAKH WAR AND THE SUBSEQUENT PERIOD IN THE ARABIC-LANGUAGE TWITTER (2020-2021). 35-49

Tatev Mkrtchyan
IMAM ALI'S LETTER TO MALIK AL-ASHTAR AS A MODEL OF JUST GOVERNANCE/RULERSHIP, RELIGIOUS RIGHTEOUSNESS AND PIETY 50-61

Anna Antonyan
THE FORMATION OF THE ṬABAQĀT GENRE IN THE 9TH CENTURY ARAB-MUSLIM WRITTEN CULTURE 62-75

Spartak Baghdasaryan
THE 2005 IRAQI CONSTITUTION AND THE FORMATION OF A NEW SYSTEM OF GOVERNMENT 76-94

Turkic Studies

Lusine Khachatryan, Anushik Martirosyan, Alexander Safaryan
ON THE PECULIARITIES OF TEACHING TERMS FORMED WITH PREPOSITIONS ÜZERE AND DİYE OF THE TURKISH LANGUAGE AND THEIR COLLOCATIONS IN THE ARMENIAN LANGUAGE 95-109

Samvel Ramazyan
NEWLY DISCOVERED ARMENIAN PERSONAGES IN
THE TURKISH VERSIONS OF THE EPIC "KOROGLU" 110-116

Tamara Aghamalyan
IDEOLOGICAL BASIS OF THE REPUBLICAN PEASANTS'
NATION PARTY 1965-1969 117-131

Albina Muradyan
PUBLIC PERCEPTIONS AND MANIFESTATIONS OF RELIGIOUS
AND TRADITIONAL BELIEFS DURING
THE CORONAVIRUS PANDEMIC IN TURKEY 132-152

Iranian Studies

Arpine Arushanyan
THE IDEA OF THE TRANSMIGRATION OF SOULS
IN EXTREME SHIA SECTS 153-167

Liana Petrosyan
HUMAN RIGHTS AND FREEDOM OF SPEECH IN IRI DURING
M. AHMADINEJAD'S PRESIDENCY (2005-2013) 168-182

Zhanna Vardanyan
IRAN'S POSITION DURING AND AFTER
THE THIRD ARTSAKH WAR 183-195

***

Ashkhen Hovsepyan
ARMENIAN-INDIAN RELATIONS. HISTORICAL
OVERVIEW 196-204

BOOK REVIEW

Artyom Tonoyan
Hovhannes Khorikyan, The Administrative Divisions of Achaemenid
Iran, "Eldorado" publisher, RA, Gyumri, 2021, 456 p: 205-211

Ալբինա Մուրադյան[1]

ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Բանալի բառեր. *Թուրքիայի Հանրապետություն, կորոնավիրուս, համաճարակ, իսլամ, Ռ.Թ. Էրդողան,*

Ընդունված է համարել, որ 21-րդ դարում, երբ տեխնոլոգիական հեղափոխությունը գրեթե հասել է իր գագաթնակետին, ու ամեն ինչ գնում է դեպի ավտոմատացումը, բժշկությունը պետք է նույնպես քայլի ժամանակին զուգընթաց և առողջապահական համակարգից հետզհետե դուրս մղի ավանդական ու ազգային բժշկության տարրերը: Սակայն անհերքելի է այն փաստը, որ այն դեռ շարունակում է արմատացած մնալ հասարակության մեջ և լուռ մրցակցում է դասական բժշկության նորարական զարգացումների հետ: Դժվար է հավատալ, սակայն իրողություն է, որ օրինակ Աֆրիկայի, Ասիայի, Լատինական Ամերիկայի և Միջին Արևելքի զարգացող երկրների բնակչության 70-95 տոկոսը, առաջնային առողջապահության համար, օգտագործում է ավանդական բժշկությունը՝ ներառյալ կոմպլեմենտար կամ բուսական դեղամիջոցները[2]: Թվային այսպիսի պատկերը ունի մի քանի խորքային պատճառներ. առաջինը, կարծում ենք սերտորեն

[1] ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետ, Թուրքական պատմաբանասիրություն մագիստրոսական ծրագիր, 1-ին կուրս
Ալբինա Մուրադյան – Ազգային ժողովրդավարության ինստիտուտ, ֆելոու, muradyan.albina1999@gmail.com

[2] Տե՛ս Robinson M., Zhang X., “The world medicines situation 2011”, Geneva 2011, pg. 2 http://digicollection.org/hss/documents/s18063en/s18063en.pdf

առնչություն ունի անցյալի ինքերցիայի հետ: Մարդիկ շատ հաճախ ենթագիտակցորեն հավատում են, որ դարերի խորքից եկող բուժման մեթոդները արդյունավետության բարձր ցուցանիշ ունեն, ու երբեմն դասական բժշկական բուժման տարբերակների մի քանի ձախողված փորձարկումներից հետո, հակված են ավանդականին: Երկրորդը կապված է միևնույն բուժման համար վճարվող գումարի ու կիրառվող միջոցների հետ: Արդի ու գերզարգացած բուժզննումներն հասանելի չեն բոլորին, դրանք կապված են ֆինասնական մեծ ծախսերի հետ, իսկ զուգահեռ իրականության մեջ ավանդական բժշկությունը առաջարկում է անհամեմատ ավելի մատչելի ու «փորձված» տարբերակներ: Իսկ երրորդ, ու ցավալի հանգամանքն այն է, որ աշխարհը դեռ չի հասել այն մակարդակին, որ բժշկական հաստատություններ լինեն բոլոր բնակավայրերում, ու այլընտրանք չունենալով, մարդիկ դիմում են ալտերնատիվ բուժման մեթոդներին: Յուրաքանչյուր էթնիկական խումբ, ժողովուրդ կամ հասարակական շերտ ունի իրեն բնորոշ ավանդական բուժամիջոցները, որոնք դարերի ընթացքում փոխազդվել են միմյանց հետ, ու դա է պատճառը, որ հաճախ շատ մեթոդներ փոքր ի շատե տարբերություններով համընկնում են իրար հետ: Այդ նախադեպը գրանցվում է հատկապես բազմազգ ու բազմամշակույթ պետական կազմավորումներում, որոնցից ցայտուն օրինակ կարող է համարվել հենց Օսմանյան կայսրությունը:

2019 թ. դեկտեմբերի կեսերին, Չինաստանի Հուբեյ շրջանի Ուհան քաղաքում, դեռևս անհայտ պայմաններում առաջ եկած վիրուսային թոքաբորբը, ըստ էության շնչառական հիվանդություն է, որը ստացավ Կորոնավիրուս (Covid-19) անվանունը: Անունը ծագում է լատիներեն corona բառից, որը նշանակում է պսակ, ծաղկեպսակ: Համաձայն նախնական վարկածի, հիվանդությունը տարածվել է այն դեպքից հետո, երբ նշված քաղաքի բնակիչը կերել

էր անհայտ ծագման չղջիկի միս, որն էլ հանգեցրել էր վիրուսի՝ մարդկային օրգանիզմում հայտնվելու դեռևս վերջնական չապացուցված իրողությանը: Չնայած Չինաստանի գործադրած ջանքերին, վարակի օջախը իզոլացնելու համար, այնուամենայնիվ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 2020 թվականի մարտի 11-ին Covid-19-ը հայտարարեց որպես համաճարակ[3]: Ինչպես և ողջ աշխարհը, Թուրքիան ևս անմասն չմնաց իրավիճակով պայմանավորված արտակարգ գործողություններ ձեռնարկելուց: Նախքան երկրում առաջին դեպքի հաստատվելը, թուրքական կառավարությունը 2020թ. հունվարի 30-ին ինքնաթիռ էր ուղարկել վարակի օջախ հանդիսացող Ուհան քաղաք, այնտեղ գտնվող Թուրքիայի 34 քաղաքացիներին երկիր վերադարձնելու համար[4]: Իսկ Չինաստանում անվերահսկելի կերպով աճող թվերի ֆոնի վրա, Թուրքիայի Առողջապահության նախարար Ֆահրեթթին Քոջան, համաճարակի խնդիրներով զբաղվող նորաստեղծ «Գիտական խորհրդի» հետ հանդիպումից հետո, լրագրողներին հայտնեց, որ ինչպես մի շարք երկրներ, այդ թվում և Թուրքիան, փետրվար 3-ից մինչև ամսվա ավարտը դադարեցնելու է Չինաստանի հետ օդային բոլոր թռիչքները[5]: Սրան զուգահեռ, երբ հարևան շատ երկրներում, մասնավորապես Իրանում, որտեղ հաստատված դեպքերի մասին հայտնել էին դեռևս փետրվար ամսին, Թուրքիայում, կասկածելի կերպով, զրոյական առաջին պացիենտի մասին ԱՆ-ը հայտնեց միայն մարտի 11-ին: Չնայած ձեռնարկված բազմաթիվ

[3] Տե՛ս “Covid-19 pandemisi iki aylik değerlendirme raporu” Türk tabipleri birliği, 14 Mayıs 2020 s.8 https://www.ttb.org.tr/userfiles/files/covid19-rapor.pdf?fbclid=IwAR2eqhG1vDN0dQ6iEPbcrwKGtHulOwmjnJTf85i0Msgvh6O9_KRTqdcUYGY

[4] Տե՛ս Aksut F. “Turkish plane en route to China to airlift citizens’’ Anadolu Agency, 31.01.2020 https://www.aa.com.tr/en/latest-on-coronavirus-outbreak/turkey-closes-border-to-passengers-from-9-countries/1765711

[5] Տե՛ս “Çin'den Türkiye'ye uçuşlar ay sonuna kadar durduruldu” Deutsche Welle Türkçe https://www.dw.com/tr/%C3%A7inden-t%C3%BCrkiyeye-u%C3%A7u%C5%9Flar-ay-sonuna-kadar-durduruldu/a-52243626

միջոցառումների (դասապրոցեսի ժամանակավոր կասեցումը, միջազգային բոլոր թռիչքներով ժամանած մարդկանց ջերմային պատկերի ստուգում, և այլն) վարակակիրների կտրուկ աճը մեծ քննարկումների տեղիք տվեցին և հետզհետե հասարակական ու քաղաքական լայն զանգվածները կասկածի տակ էին դնում կառավարության հայտնած նախակորոնավիրուսային իրադրությանը վերաբերող տեղեկատվությաունը: Իսկ նախապաշտպանական գործընթացին արդեն, հաջորդեց բժշկական ուժերի մոբիլիզացման ու տեղաբաշխման գործընթացը: Թուրքիան բնակչության թվի համեմատությամբ, մի շարք երկրների զիջում էր իր առողջապահական անձնակազմի՝ բժիշկների ու բուժքույրերի թվաքանակով: Ի մասնավորի, Թուրքիան Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության երկրների շարքում 1000 հոգուն բաժին հասնող ամենաքիչ բժշկական աշխատուժ ունեցող երկիրներց է համարվում: Հետևաբար, առողջապահության ոլորտի մասնագետները ստիպված էին լինում ավելի շատ աշխատել համաճարակից բխող լրացուցիչ ծառայություններ մատուցելու պահանջը բավարարելու համար[6]:

Բնականաբար հասարակության արձագանքը նոր իրադրությանը լի էր խուճապային ու անորոշության զգացումով: Ուսումնասիրելով օգտատերերի կարծիքներից կազմված ու վեբ կայքերի հայեցակարգի հիման վրա ստեղծված Ekşi sözlük միացյալ հիպերտեքստային բառարանը, նկատում ենք, որ բնակիչները, եթե սկզբում հավատում էին, որ Թուրքիայում ձեռնարկված գործողությունների շնորհիվ չկան արձանագրված դեպքեր, ապա արդեն մարտին նկատում ենք նման քննադատական բնույթի

[6] Տե՛ս “Covid-19 pandemisi iki aylik değerlendirme raporu” Türk tabipleri birliği, 14 Mayıs 2020 s. 34 https://www.ttb.org.tr/userfiles/files/covid19-rapor.pdf?fbclid=IwAR2eqhG1vDN0dQ6iEPbcrwKGtHulOwmjnJTf85i0Msgvh6O9_KRTqdcUYGY

հրապարակումներ.«Մեր երկրում վիրուսի դեռևս չհայտնվելը պայմանավորված է, գործազրկության պատճառով բուժզննման գնալ չկարողացող, այս երկրի հիվանդանոցներ այցելելու հնարավորությունից զրկված մարդկանց գոյությամբ ...»[7]: Հետաքրքիր էր նաև հասարակության արձագանքն ու բացասական վերաբերմունքը Ներքին գործերի նախարարության 2020թ-ի մարտի 15-ի որոշման նկատմամբ, համաձայն որի կորոնավիրուսի շրջանակներում հաջորդ օրվա ժամը 10-ից ժամանակավորապես դադարեցվելու էին բարերի, դիսկոտեկների, գիշերային ակումբների աշխատանքը[8]: Սոցցանցային տիրույթում մեծ քննարկումների տեղիք տվեց այս հայտարարությունը, քանի որ ըստ հանրային կարծիքի, կային գործունեությունը դադարեցնելու համար ավելի վտանգավոր ու մարդաշատ վայրեր. վերևում արդեն իսկ հիշատակված օնլայն հարթակի գրառումները ընթերցելիս, կարելի էր հանդիպել այսօրինակ բովանդակությամբ մտքեր. «Ներքին գործերի նախարարության որոշմամբ մենք հասկացանք, որ կորոնավիրուսը փոխանցվում է միայն ալկոհոլային վայերում. այն չի հանդիպում ռեստորաններում, սրճարաններում և հատկապես մզկիթներում[9]»: Ըստ էության մենք նկատում ենք, որ Թուրքիայում կորոնավիրուսային համաճարակը հետզհետե սկսում էր աղերսներ ունենալ ոչ միայն բժշկական, այլ նաև սոցիալական ու կրոնական պատկերացումների հետ: Աշխարհում տիրող անելանելի ու ողբերգական իրավիճակին զուգահեռ, շատ մարդիկ, այդ թվում նաև Թուրքիայի

[7] Տե՛ս Ekşisözlük.com “Covid-19 tepkileri ” 10.03.2020 https://eksisozluk.com/covid-19--6362411?p=6

[8] Տե՛ս “İçişleri Bakanlığı: Koronavirüs sebebiyle eğlence mekanlarının faaliyeti geçici olarak durduruldu” tr.sputniknews.com 15.03.2020 https://tr.sputniknews.com/koronavirus-salgini/202003151041603330-icisleri-bakanligindan-valiliklere-koronavirus-tedbirleri-genelgesi-eglence-yerleri-gecici-olarak/

[9] Տե՛ս Ekşisözlük.com “Covid-19 tepkileri ” 15.03.2020 https://eksisozluk.com/covid-19--6362411?p=13

քաղաքացիները, հումորային-սարկազմատիկ մեմերով արտահայտում էին իրենց վերաբերմունքը ստեղծված իրավիճակի նկատմամբ: Վախի մթնոլորտում գտնվողները նշում էին, որ նրանք ավելի շուտ կմահանան պարանոյիայից քան վարակը կհասնի իրենց: Իսկ կորոնավիրուսի մասին ամենատարածված արտահայտություններից մեկում ասվում էր, որ այդ վարակը միակ նոր բանն է, որը մարդ այս աղքատության պայմաններում կարող է ունենալ Թուրքիայում:

Համաճարակի երկրորդ ամսի՝ 2020թ. մայիսի 10-ի պաշտոնական տվյալների համաձայն, Թուրքիան դրական թեստերի թվով աշխարհում զբաղեցնում էր 9-րդ (138957 դեպք), իսկ գրանցված 3786 մահերի թվով 13-րդը տեղը[10]: Հասարակական ընկալումները սակայն բավականին տարբերվում էին միմյանցից, մասնավորապես, եթե մի շերտը թվիթերյան, ինստագրամյան հարթակներում հանդես էր գալիս տանը մնալու ու վարակի շղթան կոտրելու կոչերով՝ տարածելով տանը մնա (թուքերեն #EvdeKal) հեշթեգները, մյուս հատվածը շարունակում էր հանցագործ անպատասխանատվություն ցուցաբերել իրավիճակի նկատմամբ: Սակայն այս համատեքստում մեզ հետաքրքրում է, թե ինչպիսի արձագանք էին տալիս Թուրքիայի ծայրամասային նահանգներում ապրող ու իրավիճակի մասին շատ հաճախ նաև միֆային պատկերացումներ ունեցող քաղաքացիները:

Վերևում արդեն իսկ նշեցինք, որ ավանդական բժշկությունը անհերքելի իրողություն է հանդիսանում աշխարհում, ու Թուրքիայի նման բազմազգ երկրում դա արտահայտվում էր յուրովի: Նախ և առաջ, դա ունի պատմական հիմքեր. դեռևս հնագույն ժամանակներից, ներկայիս Թուրքիայի

[10] Տե՛ս “10 Mayıs Koronavirüs tablosu!” haberturk.com 10.05.2020 https://www.haberturk.com/10-mayis-koronavirus-tablosu-turkiye-corona-virusu-son-dakika-vaka-sayisi-koronavirusten-bugun-kac-kisi-oldu-2674803

տարածքում ապրող բազմաթիվ ցեղային խմբավորումներ, հատկապես նախահիսլամական շրջանում, մեծ հակում են ունեցել շամանականությանը: Շփում ունենալով տեղաբնիկ ժողովուրդների հետ, թուրքական ավանդական բժշկությունը, անշուշտ, շատ տարրեր է նրանցից վերցրել, սակայն դրա զարգացման մեջ ամենակարևոր դերը, կարծում ենք, հանդիսացել է տարածաշրջանի բուսական հարուստ աշխարհը[11]: Հետաքրքրական է այն փաստը, որ համաճարակի ընթացքում ավանդական բժշկությանը տիրապետելու քողի տակ հանդես էին եկել մի շարք մարդիկ, ու իրավապահ մարմինների կողմից հանցագործության բազմաթիվ դեպքեր էին արձանագրվել:

Եվ՛ բժշկության, և՛ հասարակական ընկալումներում ծանոթ տերմին է պլացեբոյի էֆեկտը, երբ դատարկ հաբը, որում բուժիչ հատկություն ունեցող ոչինչ չկա, ազդում է հիվանդի վրա՝ նրա մտավոր ազդակների ու ներշնչանքի պատճառով: Այդ կերպ մարդը հավատում է, որ նշանակված «բուժումը» կօգնի, և ինքն իրեն «ծրագրավորում է» այդ մտածողությամբ: Թուրքիայում գոյություն ունի դրա հետաքրքիր անալոգը: Եթե առհասարակ հիշատակված էֆֆեկտը առաջանում է առանց քիմիական տարրեր պարունակող դեղահաբեր օգտագործելու միջոցով, ապա թուրքական հասարակական ընկալումներում նույնատիպ ֆորմատով է «աշխատում» հատուկ տեսակի վզնոցը: Այն կրոնական հատուկ ամուլետ է, որը թուրքերեն կոչվում է մուսքա (Muska), որի ներսում տեղադրվում է առողջության ու վերականգնման մասին փոքրիկ գրություն, և դա անցկացնելով շղթայի վրա, կախում են վզից: Առաջին հայացքից ավանդական

[11] Ծնթգրթ. Համաձայն ներկայիս ուսումասիրությունների տվյալների, աշխարհում հաշվվում է մոտավորապես 350.000 բուսատեսակ, որոնցից 10.000-ից ավելի առանձնյակ հանդիպում է ներկայիս Թուրքիայի Հանրապետության տարածքում: Տե՛ս Sargin S. “Türkiye’nin floristik zenginlikleri - muhtemel juri sorulari” Ankara Üniversitesi, s. 1

«բուժական այս մեթոդը» իրենից ոչ մի վտանգ չի ներկայացնում, սակայն Թուրքիայում արձանագրվել էին խաբեության բազմաթիվ դեպքեր: Մասնավորապես Գյունգյորենում, Գ. Ֆիքրեթը, ով քաղաքացիների մոտ իրեն որպես իմամ էր ներկայացրել, բերման էր ենթարկվել «Կորոնավիրուսի բուժման, բաժանված զույգերի հաշտեցման և հմայություններից ազատելու» մեղադրանքներով: Գյունգյորենի շրջանի ոստիկանները պարզել էին, որ նշված անձնավորությունը, խաղալով մարդկանց կրոնական զգացմունքների հետ ու չարաշահելով նրանց վստահությունը, բազմաթիվ զանցանքներ էր թույլ տվել, այդ թվում նաև պատրաստել էր գրված բազմաթիվ ամուլետներ[12]: Ոստիկանության աշխատակիցները, ներկայանալով որպես հաճախորդներ և պայմանավորվելով մուսքա գնելու համար, հենց դեպքի վայրում արձանագրել էին հանցագործությունը, որից անմիջապես հետո ձերբակալել ինքնահռչակ «հոջային»: Յուրաքանչյուր ամուլետի համար վերցնելով 200 թուրքական լիրա, մեղադրյալը, համաձայն նախաքննության, իր խաբեության ճիրաններն էր գցել հարյուրավոր մարդկանց: Ըստ Թուրքիայի Քրեական օրենսգրքի 158-րդ հոդվածի, Գ. Ֆիքրեթի նկատմամբ հարուցվել է քրեական գործ «Որակավորված խարդախություն կրոնական համոզմունքների և զգացմունքների չարաշահման պատճառով[13]»:

Խոսելով կրոնի մասին, պետք է նշենք, որ ողջ աշխարհում կորոնավիրուսի և իսլամի հարաբերությունները նույն գետով չէին հոսում: Covid-19-ի հավանական բռնկումները պահանջում են տարբեր գործողությունների փոխակերպում, որպես կանոն ոչ

[12] Տե՛ս “Koronavirüs için muska yazan sahte hoca suçüstü yakalandı” tr.sputniknews.com 06.04.2020 https://tr.sputniknews.com/turkiye/202004061041762575-koronavirus-icin-muska-yazan-sahte-hoca-sucustu-yakalandi/

[13] Տե՛ս “Corona virüs için muska yazan sahte hoca, polise suçüstü yakalandı” ntv.com.tr 06.04.2020 https://www.ntv.com.tr/turkiye/corona-virus-icin-muska-yazan-sahte-hoca-polise-sucustu-yakalandi,33M2SpF0qkSyNH1dH8gbSA

միշտ է հնարավոր լինում ամեն բան հարմարեցնել նոր իրողությանը և ամենասուր հարցերից մեկը հանդիսանում են կրոնական ծիսակատարությունների իրականացումը: Ամենահասարակ օրինակներից մեկն այն է, որ սոցիալական հեռավորության կանոնների պաշտպանելու արդյունքում մզկիթում արգելվում են ժողովական աղոթքներն ու տարբեր արարողակարգային ծեսերը: Սակայն նման երկրում ինչպիսին Թուրքիան է, որտեղ իսլամը ունի գերակա դիրք, բախումները անխուսափելի էին դառնում: Պետք է ընդգծենք, որ Թուրքիայի առողջապահության ոլորտի մասնագետներն ու գիտնականները, Թուրքիայի բժշկական ասոցիացիայի գլխավորությամբ, կորոնավիրուսի համաճարակի դեմ պայքարելու հարցում հանդես էին գալիս փաստերի վրա հիմնված առաջարկներով, բայց երկրի կրոնական հաստատություններում նրանք բախվում էի հզոր պատնեշի: Կառավարության հզոր լծակ հանդիսացող Կրոնական գործերի վարչությունը, որը ենթադրաբար պետք է կարգավորի իսլամի դերը երկրում, դարձել է քովիդի դեմ պայքարի հիմնական ինստիտուտներից մեկը, բայց ոչ լավ իմաստով:

Դեռ ի սկզբանե պարզ էր, որ համավարակի ամենամեծ սպառնալիքը գալու էր Թուրքիայի սահմաններից դուրս, հատկապես նրանց կողմից, ովքեր իսլամական ուխտագնացություններ էին կատարում դեպի Մեքքա: Երբ Սաուդյան Արաբիայի իշխանությունները հայտնաբերեցին կորոնավիրուսի 100 դեպք, նրանք արագ հայտնեցին Կաաբայի սրբավայրում ուխտագնացությունները չեղարկելու մասին, ու մինչև մարտի 15-ը Թուրքիայից 21 հազար ուխտագնացներ ետ վերադարձան տուն[14]: Փորձագետները պնդում էին, որ նշված

[14] Տե՛ս Butler D. “UPDATE 1-Turkey quarantines thousands of pilgrims, orders closure of bars” reuters.com 15.03.2020 https://www.reuters.com/article/health-coronavirus-turkey-idUSL8N2B81BQ

անձինք պետք է անհապաղ կարանտինի անցնեն, բայց նախագահ Ռ. Թ. Էրդողանի ղեկավարած «Արդարություն և զարգացում կուսակցությունը» չգնաց այդ քայլին, ամենայն հավանականությամբ չցանկանալով անհանգստացնել իրենց ուխտագնաց ընկերներին, ովքեր որ նրանց էին քվեարկելու առաջիկա ընտրությունների ժամանակ: Փոխարենը Կրոնական գործերի վարչությունը միայն հորդորեց վերադարձածներին, ինքնամեկուսանալ տանը ու չընդունել հյուրեր[15]: Բայց ուխտագնացների մեծ մասը չէր հետևում հայտարարված կանոններին. սոցիալական ցանցերը լցված էին ուխավորների այցեր կատարելու ու հյուրեր ընդունելու լուսանկարներով: Երկրորդը, Թուրքիայում՝ չնայած աշխարհում տիրող իրավիճակին, շարունակվում էին ուրբաթօրյա աղոթքները, որին մասնակցում էին 18 միլիոնից ավել մարդիկ: Այն պարագայում, երբ Իսլամական աշխարհի շատ երկրներ արգելք էին սահմանել հավաքվելու համար, Թուրքիայում, մարտի 6-ին, երբ համաձայն պաշտոնական տվյալների դեռևս չկար վիրուսի հաստատված ոչ մի դեպք, Կրոնական գործերի վարչությունը հայտարարեց Ուրբաթօրյա քարոզի թեման, որտեղ անուղղակի կերպով շեշտադրված էր կորոնավիրուսային իրողությունը: «Ալլահը մաքուր է, նա սիրում է մաքրությունը» խորագրով կրոնական քարոզը, որտեղ խոսվում էր այն մասին, որ «Տիրոջ սերը վայելում են հասարակ, մաքուր և բարեպաշտ մարդիկ», նշվում էր նաև, որ պետք է մշտապես լվանալ ձեռքերը, ու հիգիենայի կանոններին հետևել ավելի խիստ քան երբևէ[16]: Բարերը, գիշերային

[15] Տե՛ս "Coronavirus: Turkey quarantines thousands of pilgrims returning from Saudi Arabia" thehindu.com 15.03.2020 https://www.thehindu.com/news/international/coronavirus-turkey-quarantines-thousands-of-pilgrims-returning-from-saudi-arabia/article31074505.ece

[16] "Diyanet 6 Mart Cuma hutbesini yayımladı! Cuma hutbesinde Koronavirüs vurgusu" milliyet.com.tr 05.03.2020 https://www.milliyet.com.tr/gundem/diyanet-6-mart-cuma-hutbesini-yayimladi-cuma-hutbesinde-koronavirus-vurgusu-6159268

ակումբները, գրադարաններն ու թանգարանները փակ էին, բայց մզկիթները շարունակում էին գործել, և նրանք լեփ-լեցուն էին հավատացյալներով: Եվ միայն մարտի 16-ին կառավարությունը հայտարարեց, որ ուրբաթօրյա համայնքային աղոթքները դադարեցվում են, սակայն արդեն ուշ էր: Մահվան առաջին դեպքը արձանագրվեց մարտի 17-ին, ու մեկ շաբաթվա ընթացքում Թուրքիան դեպքերի աճի տեմպով գերազանցում էր մյուս բոլոր ռիսկային երկրներին[17]:

Նախագահ Էրդողանը մարտի 18-ին Չանքայա նախագահական նստավայրում հանդես եկավ ծավալուն ու համապարփակ ելույթով, որտեղ անդրադառնալով կորոնավիրուսի առաջացրած առողջապահական, սոցիալ-տնտեսական հետևանքներին, իր խոսքում հաճախ նշում էր, որ խիստ անհրաժեշտ է հետևել համաճարակային կանոններին. «Ինչպես որ բազմիցս ենք ասել, Թուրքիայի ամենամեծ ուժը միասնությունն ու եղբայրությունն է: Ես ամբողջ սրտով հավատում եմ, որ Ալլահի օգնությամբ ու մեր ժողովրդի աջակցությամբ մենք առանց սայթաքելու, կհաղթահարենք այս խոչընդոտային իրավիճակը՝ դեռ մի բան էլ էլ ավելի հզորանալով:[18]»: Հեռուստատեսային հաղորդումներում կորոնավիրուսի լուսաբանման վերաբերյալ հանդես եկած ելույթներով գերակշռում էր ոչ թե առողջապահության ոլորտի անձանց, այլ կրոնական գիտնականների թիվը: Նման հարցազրույցներից, հատկապես մեծ աղմուկ բարձրացրեց գրող-աստվածաբան Ալի Ռըզա Դեմիրջանի հարցազրուցը HaberTurk հեռուստաընկերությանը: Հատկապես

[17] Տե՛ս Dundar C. “In Turkey, political Islam is getting in the way of rational health policy” washingtonpost.com 26.03.2020 https://www.washingtonpost.com/opinions/2020/03/26/turkey-political-islam-is-getting-way-rational-health-policy/

[18] “Cumhurbaşkanı Erdoğan'dan önemli açıklamalar” cnnturk.com 18.03.2020 https://www.cnnturk.com/turkiye/son-dakika-cumhurbaskani-erdogandan-onemli-aciklamalar180320

ուշագրավ էին կոռոնավիրուսի համաճարակի դեմ պայքարի նրա այս մտքերը. «Արգելե՛ք դավաճանությունը, արտաամուսնական կապերը, համասեռամոլությունը և նմանատիպ հարաբերությունները, դրանք մեր Տիրոջ կողմից արգելվել են մեզ: Վերացրեք սրանք, ու կորոնավիրուսային համաճարակը և մնացած այլ հիվանդությունները կոչնչանան[19]»: Հասարակությունը, սակայն, գիտակցելով պահի լրջությունը և մարդկային կյանքին սպառնացող վտանգի նկատմամբ պետության կողմից հրամցվող նման վերաբերմունքը, իրենց բողոքի ձայնը բարձրացրին սոցցանցային հարթակներում: Հարցազրույցի տեսանյութերի տակ, մարդիկ հակադարձում էին աստվածաբանին, ասելով, որ այդ ամենը օրինակ արգելված է Իրանում, սակայն այնտեղ համավարակը շարունակում է մեծ թափով տարածվել: Իսկ ոմանք էլ սարկազմային տողատակով, ասում էին, որ հոջան մոռացավ խոսել մանկապղծության՝ պեդոֆիլիայի մասին. հավանաբար նրա կինը դպրոցական է, դրա համար:

Իսլամի դրսևորումները յուրաքանչյուր երկրում ունի իր առանձնահատկություններն ու տարբերությունները: Թուրքիայում ամենաազդեցիկ իսլամական կազմակերպությունը, այս աշխատանքում մեր կողմից բազմիցս անդրադարձած Կրոնի գործերի վարչությունն է՝ առավել հայտնի Դիյանեթ (Diyanet) անունով, որը առաջին հերթին պատասխանատու ու հաշվետու է երկրի նախագահին[20]: Բայց թուրքական իսլամը չի սահմանափակվում Դիյանեթով: Դա ներկայացված է նաև մեծ թվով սուֆիական եղբայրություններով, որոնցից ամենահայտնին

[19] Kadraj Magazin Twitter hesabi, 17.03.2020 https://twitter.com/kadrajmagazin/status/1239668995852316672

[20] Ծնթգրթ. Գործելով որպես հսկայական նախարարություն՝ իր 130,000 աշխատողներով, Diyanet-ը ղեկավարում է 84,000 մզկիթներ և որպես այդպիսին, իրական ազդեցություն է գործում հավատացյալների վրա:

Նաքշբանդիականն է: Այն ողջ աշխարհում ունի մեծ ցանցային համակարգ, սակայն Թուրքիայում առավել հայտնի են նաքշբանդիական եղբայրության 3 ճյուղերը, որոնցից մեկի հետ սերտ հարաբերություններ ունի անձամբ նախագահ Էրդողանը և հաճախ է այցելում նրանց[21]: Թուրքական իսլամի յուրաքանչյուր ճյուղ էական տեղ և ուշադրություն է հատկացնում համաճարակին, սակայն դրանց մեկնաբանումները յուրաքանչյուրի մոտ սկզբունքորեն տարբերվում են: Ֆունդամենտալիստների, արմատականների և այլ կրոնների ուղղափառների նման, թուրքական իսլամի մի մասը արձագանքեց ճակատագրականությամբ և հրաժարումով՝ համաճարակը համարելով աստվածային պատիժ: Այս թեմայով հրապարակված ամենահայտնի հոդվածներից մեկը պատկանում է աստվածաբան Աբդուլազիզ Քըրանշալին, ով իր «Կորոնան պատիժ է թե փորձություն» հոդվածում, հետաքրքիր համեմատություն է տանում ղուրանյան հետյալ պատումի հետ. Ալիին հարցնում են, թե այն, ինչ իրենց հետ պատահեց՝ դժբախտություն է, թե Ալլահի կողմից պատիժ: Ալին պատասխանում է. «Եթե մեզ հետ պատահած դեպքը մեզ մոտեցնում է Ալլահին, ապա փորձություն է, իսկ եթե հեռացնում՝ ապա դժբախտություն[22]»: Եվ նմանատիպ զուգահեռներ տանելով, հեղինակը համեմատականներ էր տանում, թե կորոնավիրուսը ինչպես է ազդել ընտանիքի, անձնական կյանքի, գումարի, հավատի վրա, մոտեցրել է Ալլահին, թե ընդհակառակը՝ էլ ավելի ներփակել խնդիրների մեջ: Մյուսները, գտնվելով կուրացած կամ անգրագետ վիճակում, հերքում էին սպառնալիքի իրողությունը, նախընտրելով իրենց

[21] Տե՛ս Aviv E. “The İsmailağa community and its relationship with the AK party” Democracy and security, 2018 pg.8

[22] Kıranşal A. “Korona bir ceza mıdır? Yoksa bir imtihan mıdır?” 02.04.2020 https://www.milligazete.com.tr/makale/4127154/abdulaziz-kiransal/korona-bir-ceza-midir-yoksa-bir-imtihan-midir

պաշտպանությունը գտնել Ղուրան կարդալով կամ մզկիթներ գնալով: Իսկ մյուսների մոտ երևում էին բացահայտ ընդգծված իսլամական ծայրահեղական հայացքներ: Նրանք պնդում էին, որ այս ամենը կազմակերպվել է այսպես կոչված Թուրքիայի թշնամիների, սիոնիստների ու հրեաների կողմից: Հիշատակման է արժանի այն փաստը, որ նման հայացքներ ունի նաև Թուրքիայի նախկին վարչապետ Նեջմեթթին Էրբաքանի որդին՝ Ֆաթիհ Էրբաքանը: «Բարօրություն» կուսակցության նախագահի գլխավորած պատվիրակությունը հանդիպում ունենցավ Անկարայում Պաղեստինի դեսպանի հետ: Իր խոսքում Ֆ. Էրբաքանը, նշելով որ սիոնիզմի հիմնական նպատակը իսլալամական բոլոր երկրների, այդ թվում և Թուրքիայի ոչնչացումն է, հանդես եկավ նման հայտարարությամբ. «Պաղեստինի հարցը միայն արաբների խնդիրը չէ, ինչպես որ շատերն են կարծում: Իսրայելական մեծ նախագծի սահմանները հասնում են մինչև Կապադովկիա ու Մադինա, հետևաբար սիոնիզմը ողջ մուսուլմանների խնդիրն է, քանի որ սիոնիզմի հիմնական գաղափարը, բացի հրեաներից, ողջ մարդկությանը իրեն ծառայեցնելու մեջ է ամփոփված[23]»: Անդրադառնալով կորոնավիրուսային համաճարակին, նա նշեց, որ հրեաների հիմնական նպատակը աշխարհի բնակչության թիվը որքան հնարավոր է նվազեցնելն է, և այս նոր վիրուսը, ինչպես օրինակ քաղցկեղը, համասեռամոլությունը, միտված են մարդկային կյանքի դեմ: Դեռ ավելին, դատելով իր ելույթից կարելի է ասել, որ նա համաճարակը այդքան վտանգավոր չի համարում, որքան սիոնիզմը, ասելով, որ դա մարդկության համար խնդիրներ առաջացնող հինգհազարամյա միկրոբ է[24]: Այս ելույթը ևս մեկ

[23] “Fatih Erbakan Corona virüs'ünün arkasında işgalci Siyonistlerin olduğunu söyledi” ilkha.com 06.03.2020, https://ilkha.com/guncel/fatih-erbakan-corona-virus-unun-arkasinda-isgalci-siyonistlerin-oldugunu-soyledi-117309

[24] Տե՛ս, նույն տեղում:

անգամ ապացուցում է, որ Թուրքիայում գլոբալ ու համամարդկային խնդիրները անուղղակի կերպով գործիք կարող են դառնալ պետական այրերի ձեռքում, ու դրանք ծառայում են որպես շղարշ՝ քաղաքական, ավելի կոնկրետ ազգայնամոլական հայացքները արտահայտելու համար. վերը հիշատակված հայտարարությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ հակասեմական գաղափարախոսության պոռթկում։

Թուրքական իշխանությունները, չխնայելով ոչ մի ջանք պատմական անցյալի ինտերցիայով հասարակության մտածելակերպը կաղապարավորելու համար, այս անգամ արդեն քարոզչական վեկտորները շրջում են դեպի գրեթե բոլորի մոտ համընդհանուր մասայականայություն ու ակնածանք առաջացնող՝ Օսմանյան կայսրության ժամանակաշրջան։ Օգտագործելով թուրք-օսմանյան ինքնության գործոնը, նրանց իսկապես հաջողվել է «հիշեցնել» մարդկանց, որ տեղաշարժի սահմանափակումները նոր իրողություն չեն, և կիրառվել են անգամ կայսրության շրջանում։ Կարևոր է ընդգծել, որ համաճարակի ընթացքում ԶԼՄ-ներում սկսեցին բազմաթիվ հոդվածներ հրապարակվել Սուլթան Մահմուդ Երկրորդի ու նրա կառավարման ժամանակահատվածում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ։ Կապելով նրա անունը, ոչ միայն ոչ մուսուլմանների համար Թանզիմաթյան բարեփոխումները «իրականացնելու» ուռճացված պնդումների հետ, արծարծվում էր այն հանգամանքը, որ նա կայսրության այն առաջամարտիկ միապետներից էր, ով երկիրը դրեց զարգացման ուղեծրի վրա՝ նաև առողջապահական համակարգի մշակված ռազմավարության և համաճարակների դեմ արդյունավետ պայքար մղելու շնորհիվ։ Այս համատեքստում կարևոր էր Մուհամեդ Մահմուդ Բաքիրի կողմից գրված լայնածավալ հոդվածը։ Այնտեղ հեղինակը մանրամասնորեն ներկայացնում է Օսմանյան կայսրությունում տիրող իրավիճակը.

ունեցած տարածքի ու նաև եվրոպական երկրների համեմատ քիչ բնակչություն ունեցող երկրում, որտեղ պետական բյուջեն մեծամասամբ կազմվում էր մարդկանցից հարկեր գանձելու շնորհիվ, կենսական նշանակություն ուներ նրանց երկարակեցությունն ապահովելը[25]: Վերոհիշյալ հանգամանքներից և ինչպես նաև մարդահամարի այդ ժամանակվա ոչ հուսադրող տվյալներից ելնելով, Մահմուդ Երկրորդ սուլթանի օրոք տնտեսական ու ռազմական կանոնակարգերին զուգահեռ ստեղծվեց նաև կարանտինի խորհուրդ[26]: 1838 թվականին կայսրության իսլամական բարձրագույն հեղինակություններից մեկի՝ Ասըմ Էֆենդիի կողմից արձակված ֆեթվան՝ Կարանտինի գերագույն խորհուրդ (թուրքերեն՝ Meclis-i Tahaffuz-i Âli) հիմնելու մասին, այդ ուղղությամբ իրականացված կարևորագույն քայլերից մեկը կարող է համարվել[27]: Հիշատակված փաստերը համադրելով, մենք կարող ենք նկատել, որ նմանատիպ պատմական ակնարկները միտված են ներկա իրողության հետ կապված սահմանափակումները արդարացնելու ու դրանց՝ նախկինում էլ ընդունված լինելը ապացուցելու համար:

Անշուշտ օրակարգային ամենակարևոր թեմաներից մեկը հանդիսանում էր Ռամադանի մեկամսյա տոնակատարությունների իրականացման անորոշությունը. աշխարհը, որը դեռ նոր պետք է սկսեր հարմարվել օնլայն կյանքի անխուսափելի իրողության հետ, պատկերացում չուներ, թե ինչպես պետք է իրականացնի արարողությունները, այն պարագայում երբ ի թիվս հանրահավաքների ու ցույցերի,

[25] Տե՛ս Bakir M. “Osmanlı’da Karantina Meclisi Nasıl Kuruldu?” Nisan 2020 https://www.derintarih.com/dosya/osmanlida-karantina-meclisi-nasil-kuruldu/
[26] Տե՛ս նույն տեղում
[27] Տե՛ս Balcı B. “Turkish islam and covid-19. referring to history and traditions” 06.05.2020 https://www.sciencespo.fr/ceri/en/content/turkish-islam-and-covid-19-referring-history-and-traditions

արգելվել էին նաև համընդհանուր աղոթքները մզկիթներում[28]: Բնականաբար այս հարցում ևս հասարակական կարծիքը բաժանվում էր 2 մասի. ստեղծված իրավիճակի հետ համակերպվող ու ալտերնատիվ լուծումներ փնտրող մարդկանց կողքին կար նաև մարդկանց հոծ բազմություն, ովքեր պնդում էին Ռամադանի արարողությունները իրականացնելու կարևորության ու Ալլահին չարհամարելու կենսական անհրաժեշտության մասին: Պետք է նշենք, որ տեղի էր ունենում 2 տեսակի ու միմյանցից էականորեն տարբերվող քարոզչական գործունեություն: Մասնավորապես առավել առաջադեմ շրջանակները ստեղծում կամ առաջարկում էին օնլայն հարթակներ Ռամադանի տոնի հետ կապված իրենց բաղադրատոմսերով կամ նկարներով կիսվելու համար, ավանդույթները թվայնացնելու ուղիներ փնտրում, կամ առաջարկում օրինակ FaceTime-ով օնլայն աղոթել այնպիսի ազգականների հետ, ում հետ անգամ նախորդ տարվա «Նորմալ Ռամադանի» ժամանակ չեն կարողացել տեսնվել[29]: Սակայն ինչպես արդեն իսկ նշեցինք, առկա էր նաև հակառակ իրողությունը. չհամակերպվելով մզկիթներ գնալ չկարողնալու փաստի հետ, կրոնական թևի ներկայացուցիչները, իրենց բողոքի ձայնն էին արտահայտում, ասելով, որ չկա ոչ մի գիտական ապացույց, որ օրինակ թմբուկ նվագելու արդյունքում կտարածվի կորոնավիրուսը, բայց այն ըստ էության արգելվել է երկրում: Մեկ այլ հետաքրքրական հանգամանք ևս. հոդվածում, որը հիմա ներկայացվում է, հեղինակը՝ խոսելով կրոնական ավանդույթներին հետևելու ու դրանք անվերապահորեն իրականացնելու կարևորության մասին, վրդովված նշում էր, որ

[28] Տե՛ս Пфайфер Х., Гаеди М.,“Коронавирус и ислам: как вести себя мусульманам в предстоящий Рамадан?” 21.04.2020 https://t.ly/dlC7

[29] Տե՛ս Başaran E. “Ramadan during coronavirus: An opportunity to appreciate loved ones, be grateful and self-reflect” https://www.dailysabah.com/life/religion/ramadan-during-coronavirus-an-opportunity-to-appreciate-loved-ones-be-grateful-and-self-reflect

իրականացվող քարոզը նման է «Ես տանն եմ աղոթում, կարևորը իմ սիրտը մաքուր է» արդեն իսկ մեծ տարածում գտած գաղափարախոսությանը, որը խարխլում է հավատի հիմքերը[30]: Իսկ հոդվածի ավարտին, ներողություն խնդրելով Ռամադանից՝ իր փառքին արժանի կերպով այդ տարի նրան չդիմավորելու համար, ասում էր, որ նա հավանաբար դժգոհ կլինի այդ պահվածքից, ու դրա արտացոլումը կտեսնեն առաջիկա տարում:

Արդարության համար պետք է ընդգծենք նաև այն իրողությունը, որ իսլամի գործոնը համաճարակի ժամանակ միայն բացասական երանգավորումներ չէ ,որ դրսևորել է: Ինչպես որ ցույց է տվել միջին վիճակագրությունը, վիրուսի տարածման հարցում ամենախոցելի խումբը համարվում են 65 տարեկանից բարձր անձինք, ում իմունային համակարգը շատ հաճախ չի կարողանում դիմագրավել հանկարծակի ու արագ տարածվող այդ վիրուսին: Իսկ Թուրքիայի նման իսլամական ավանդապահ երկրում, որտեղ ավագ սերունդի ներկայացուցիչները մեծամասամբ ապրում են իրենց զավակների հետ, բնականաբար նրանց խնամքը գտնվում է ավելի բարձր վերահսկողության ներքո: Հարցը ունի այլ ասպեկտ ևս. ամենակարևոր հանգամանքներից մեկը այն է, որ Թուրքիայում ծնողին այլընտանքային խմամքի, իսկ ավելի կոնկրետ ծերանոց ուղարկելը մշակութային տաբու է և հիմանականում, ծայրահեղ պայմաններում է, որ ընտանիքները որոշում են կայացնում իրենց ծնողներին ուղարկել ծերանոցներ: Անշուշտ, այս տեսանկյունից անհերքելի է իսլամի ազդեցությունը, քանի որ Ղուրանում կարող ենք գտնել բազմաթիվ պատգամներ ծնողներին հարգելու ու նրանց մասին հոգ տանելու մասին: Սակայն այլ պատկեր է օրինակ եվրոպական զարգացած երկրներում ու Ամերիկայում, որտեղ ծերանոցները տարեցների

[30] Տե՛ս Keklikçi C. “Ramazan Geçerken” 24.05.2020 https://www.milligazete.com.tr/makale/4689648/cafer-keklikci/ramazan-gecerken

խնամքի ամենատարածված ձևերից մեկն են համարվում: Տարբեր պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալները ցույց են տալիս, որ Իտալիայում, Իսպանիայում, Ֆրանսիայում և Բելգիայում COVID-19 մահերի 42% - 57%-ը, իսկ ԱՄՆ-ում 39%-ը արձանագրվել է ծերանոցներում[31]: Իսկ Թուրքիայում տարեցների խնամքը հիմնականում ընտանեկան խնդիր է, և ընտանիքի կանայք անհավասար կիսում են, ու ծողներին խնամելու համար հիմնականում պատասխանատու է դուստրը կամ հարսը: Երբ ընտանիքը ֆինանսապես կայուն է լինում, ու երիտասարդ կանայք աշխատում են, օգնության են հասնում արդեն ներգաղթյալ կին աշխատողները, ովքեր լինելով հիմնակնում հետխորհրդային երկների քաղաքացիներ դառնում են թուրք տարեցների խնամակալները[32]: Սակայն եթե այս հարցն էլ դնենք կորոնավիրուսային համաճարակի ուսումնասիրության ծիրում, պետք է նշենք, որ վարակի շղթայի շարունակականության մասին խոսք չի էլ կարող գնալ, քանի որ աշխատողները մնում են միշտ այդ տանը՝ խնամքը վերածելով 24 ժամյա աշխատանքի:

Ամփոփելով, պետք է ևս մեկ անգամ անդրադառնանք այս իրողություններին. Թուրքիան, լինելով մի երկիր, որտեղ 2002 թվականից իշխանության եկած «Արդարություն և Զարգացում» կուսակցությունը փափուկ ուժի գործադրմամբ, գրեթե 20 տարի է կայուն քայլերով իսլամը քաղաքականացնելու հնարավոր բոլոր գործիքակազմը օգտագործել էր, բախվում է մի իրողության հետ, երբ անգամ առողջապահական խնդիրն է կրոնական երանգավորումներ ստանում: Մարդկային ճակատագրերի

[31] Տե՛ս “39% of Covid-19 deaths have occurred in nursing homes — many could have been prevented” nbcnews.com 08.12.2020 https://www.nbcnews.com/know-your-value/feature/39-covid-19-deaths-have-occurred-nursing-homes-many-could-ncna1250374

[32] Տե՛ս Balt E. “The Battle Over the Numbers: Turkey’s Low Case Fatality Rate” 04.05.2020 https://www.institutmontaigne.org/en/blog/battle-over-numbers-turkeys-low-case-fatality-rate

կործանմանը զուգահեռ, քաղաքական դիվիդենտներ հավաքելու կամ էլ ազդեցության լծակները ամրապնդելու համար, թե իշխանական և թե ընդդիմադիր թևերը չէին բաց թողում ընձեռնված հարմար առիթը: Իսկ այն նույն հասարակությունը, որ կրկին 20 տարի սնվել էր իսլամական դոգմատիկ գաղափարախոսություններով, ծայրահեղական ու դրանից էլ բխող անպատասխանատու մոտեցումներ էր ցույց տալիս համաշխարհային վտանգ ներկայացնող համաճարակի նկատմամբ, որը անուղղակիորեն ազդեցություն էր թողնում և շարունակում թողել Թուրքիայի և՛ ներքաղաքական, և՛ արտաքին քաղաքականության վրա:

ОБЩЕСТВЕННЫЕ ВОСПРИЯТИЯ И ПРОЯВЛЕНИЯ РЕЛИГИОЗНЫХ И ТРАДИЦИОННЫХ ВЕРОВАНИЙ ВО ВРЕМЯ ПАНДЕМИИ КОРОНАВИРУСА В ТУРЦИИ

Албина Мурадян

(Резюме)

В статье «Общественные восприятия и проявления религиозных и традиционных верований во время эпидемии коронавируса в Турции» представлены новые реалии, возникшие в результате эпидемии в исследуемой стране. предпринята попытка изучить, какое влияние эпидемия коронавируса нового типа (теперь Covid-19) оказала на турецкую действительность, рассматривая проблему в рамках ислама, реакции общества, а также представлены позиции и противоречивые оттенки высказался в связи с ситуацией на турецкой медиа-платформе. При написании работы мы старались показать, что даже во время такой санитарной катастрофы ислам имеет свою первостепенную роль и значение в развитии событий.

Одной из стоявших перед нами задач было показать тот факт, что степень политизации ислама в Турции возросла настолько, что он стал важным инструментом пропаганды в руках представителей всех

политических сил и течений, а косвенно ислам имел решающее значение. влияние даже на катастрофу со здоровьем.

PUBLIC PERCEPTIONS AND MANIFESTATIONS OF RELIGIOUS AND TRADITIONAL BELIEFS DURING THE CORONAVIRUS PANDEMIC IN TURKEY

Albina Muradyan

(Summary)

The article on "Public perceptions and manifestations of religious and traditional beliefs during the coronavirus epidemic in Turkey" presents the new realities that have emerged as a result of the epidemic in the country under study. an attempt was made to study what kind of impact the new type of coronavirus epidemic (now Covid-19) had in Turkish reality, considering the problem in the framework of Islam, public reaction, and also it was presented what positions and contradictory shades were expressed in relation to the situation on the Turkish media platform. While writing the work, we tried to show that even during such a health disaster, Islam has its primary role and significance in the development of events.

One of the tasks before us was to show the fact that the degree of politicization of Islam in Turkey has increased so much that it has become an important propaganda tool in the hands of representatives of all political forces and currents, and indirectly Islam had a decisive influence even on the health disaster.